

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
արեկակի վեցամսայ	7 "
Արսասահմանի համար արեկակի	15 ֆր.
վեցամսայ	8 "
Արեկակի համար արեկակի	3 ռ.
վեցամսայ	1.50 "

Ծանուցման տողը սուսաշին երեսին համար 40 սանթիմի իսկ վերջին երեսին համար 20 սանթիմի է: Իրեֆիկն անէջի անգամներու համար 20 0/0 զեղջ կրչայ:

Վառահայի համար ձեռքի 10 սանթիմի է

ՇԱՐՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱՅՈՒՆԻ ՉՈՐԵՔՇԱՐԻ ԵՒ ՇԱՐՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Դամակ եւ որամ որկեյ խմբագրութեան հասցեիւն

Редакция на вѣстникъ "Шаржумъ," Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռքի

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռքի

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ տուիր

ՇԱՐՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՆԵՐԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՅԽԻԿ ՎՃԱՐԷ

ԼԱՅԻՒ ՃՈՂՈՎԸ

—)o(—

Ոչ ոք ուրանալ չէ կարող որ ծածկահայ ժողովրդի կացութիւնը շատ ծանր է. ու թէեւ ընդհանուր կոտորածներ չը կան, բայց հարստահարութիւնը, տնտեսական քայքայումը, մասնակի խեղճութիւնները, սպանութիւնները, աւերումները, գաղթականութեան հոսանքը և սպասված կոտորածների սարսափը ժողովրդին գրեթէ բացարձակ յուսահատութեան են հասցրել: Ահա այս յուսահատական բուրբիւններում նորից մէջ տեղ ընկաւ Լահէի խաղաղութեան ժողովի գումարման լուրը. «չրի մէջ խեղճվողը օձին անգամ փաթաթվում է» կեանքը փրկելու յոյսով, ասում է առածը. այդպէս էլ մեր ժողովրդի մէջ կայ մի տարր, որ մեր յուսահատական կացութեան առջեւ ընկճված, անկորող ուրիշ աւելի դրական միջոցներով մեր ազատագրութեան գործին ծառայելու միշտ ոգեւորվում է. յուսոյ նշոյլներ է արտայայտում երբ երեւան են գալիս զանազան խաղաղասիրական ժողովներ, ինչպէս օրինակի համար Լահէի ժողովը:

Լահէի առաջին ժողովի միջոցին էլ մեր ժողովուրդը ոգեւորվեց. արտասահմանի հայութիւնը ժողովներ գումարեց, պատգամաւոր ընտրեց և ուղարկեց Լահէ. ի հարկէ դա ոչ մի գրական հետեւանք չունեցաւ. ժողովը ոչ միայն մեր պատգամաւորներն են չընդունեց, մտիկ շարաւ, այլ առհասարակ այդ տեսակ խնդիրներով բոլորովին չըզբազղվեց. այդպէսով մեր ազգային իրարանցումը մնաց միայն իբր մի փաստ՝ որ արտասահմանում ապրող հայ ժողովուրդը բոլորովին անտարբեր չէ գէպի մայր հայրենիքի տառապանքները և իրեն յարմար եկած միջոցներով պատրաստ է ձայն բարձրացնել ի նպաստ տառապող եղբայրների:

Բայց մենք կարծում էինք թէ առաջին անյաջողութիւնը գոնէ մի դրական արդիւնք պէտք է ունենար մեր ժողովրդի կամ չեզոք տարրի համար. այն՝ որ ժողովուրդը, կամ աւելի ճիշդ յեղափոխութիւնից հետո մնացած տարրը պէտք է համոզվէր թէ Լահէի և դրանց նման ժողովներին գիմուսներ անելով, աղերսելով հոյսեղիվիճակը չի բարւոքվի. որովհետեւ պետական մարգիկ, որոնք բոլորն էլ նպատակ ունեն այս կամ այն ձևով, սկսած ամենավայրենի պետութեան ներկայացուցիչներից մինչեւ ամենաքաղաքակիրթ, իրենց հովանաւորութեան տակ ապրող օտար ցեղերին ձուլել և երբէք չեն դաւաճանի իրենց վարչական ուղղութեան աղերսանքների տանջանքների պէս պէս նկարագրութեանց ազդեցութեան տակ, որովհետեւ հակառակ պարագային պիտանայիններից պիտի պահանջվէր ազատութիւն լեհացիների համար, ուսներից ֆինների, հայերի, լեհերի, վրացիների և այլ ցեղերի համար, անգլիացիներից Հնդկաստանի, իրլանդացիների, Աւստրալիայից չեխերի, մալարների և այլն:

Եւ այս երկրորդ ժողովի գումարման նախաձեռնողը նոյն այդ նախագահը լինելով՝ համոզում կայ որ Ամերիկան մեր խնդիրը սեղանի վրա պէտք է դնի: Մի կողմ թողնենք այն փաստը որ այդ առաջնութիւնը ուսուցիչը կրկին մի կերպ կորչեց, որի արդիւնքը պէտք է լինի այն որ ցարի կառավարութիւնը ինքը պէտք է խճկէ ընդհանուր ծրագիրը այն խնդիրների ուղիք պէտք է քննութեան ենթարկվեն ժողովի կողմից, ուրեմն և տան

Չվող ժողովուրդների հարց չէ կարող լինել այդ ցարական ծրագրում, ու ընդունինք որ Ամերիկայի ներկայացուցիչը ի միջի այլոց և մեր հարցը մեջտեղ հանէ, ինչպէս է որ ոչ մի ուշադրութիւն չը պէտք է դարձնվի, որպէս զի միւս պետութեանց հպատակ ասնջվող ժողովուրդների խնդիր երեւան չը գայ ու բարգոծ լինենք չը առաջացնէ:

Այս բոլորից յետոյ պարզ է որ Լահէի ժողովից ու է գրական օգուտ սպասելը մեր կողմից բացարձակ տղայամտութիւն կը լինէր. հա, ուրիշ խնդիր եթէ ու է պետութիւն—օրինակ Ամերիկան, իրեն աջակից ունենալով Անգլիային—հարցը կտրուական կերպով դնէր միանգամայն յայտարարելով—«Եթէ դուք հայերին գոհացում չէք տայ մենք զէնքի ուժով թուրքիսյն կը ստիպենք այդ գոհացումը տալ: Ի հարկէ անկասկած է որ ոչ Ամերիկան և ոչ մի ուրիշ մեծ պետութիւն այդ դիրքը չէ բռնելու դէպի մեզ ներկայ պարագաներում:

Այս բացասական համոզումը ունենալով Լահէի ժողովին գիմուս մասին, բնական է որ մենք չենք կարող ոգեւորվել այդ խնդրով և ջանալ ոգեւորել մեր ազգակիցներին. սակայն միշտ ուրախ լինելով ժողովրդական, մանաւանդ չեզոք տարրերի հանրային օգտի համար իբրարանցման երեւոյթների հանդէպ մենք կարող ենք ասել, հայ ցեղի անգործ, անտարբեր մասին—ոգեւորվիր ու է ազգանպաստ շարժումով, սկսիր վարժվել զօհողութեան, հետաքրքրվիր հայ ծով ցաւերով, քո մտմտութի մի մասն էլ թող այդ ցաւերի բուժման գործին ներված լինի, թէկուզ այդ բուժումը դու սպասելիս լինիս Լահէի ժողովներից. մինչեւ որ դու էլ որոշ կերպով համոզվես որ ցաւերը գարմանելու այլ միջոցներ պէտք են, բայց ոչ աչքերսնք:

ՎԱՐԴՕ

ԿՈՎԿԱՍ

ԱՐԻՒՆՈՏ Է ԶԵՐԻԾ

Բազուկից 20 սեպտեմբերի հեռագրում են ուսաց գործակալութեան. «Նաւթահանքերում աւարտած են 20 վիշկա: Շատերն էլ նորագում են: Ամեն օր տախտակ է գալիս Աւստրալիանից, Հիւսն վարպետների պակասութիւն է զգացում: Վոկզալի յետեւում հայ տների մէջ արած խաղաղութիւնը գտել է Տէր-Գրիգորեանցի եւ Տէր-Յակոբեանցի մօտ շատ զէնք եւ փամփուշտ: Տան տէրերը բանտն են տարուած:

Բօրսայի վրայ գործ չկայ:»
«Զաք. Օպլ.» թերթը հաղորդում է, որ վերջին տեղեկութիւններին նայելով, Պարսկաստանի հիւսիսային մասերում սպասում են լուրջ ընդհարումներ՝ հակահայկական եւ ընդհանրապէս հակաքրիստոնէական հիմքերի վրայ:

«Սին Օդէշ.» թերթի մէջ տպուած կայ մի ընդարձակ հեռագիր թիֆլիզից՝ կողկասի ներկայգրութեան մասին: Պատմում է ընդհարումները Գօրիսում, Շուշուայ մասին է խօսում եւ առհասարակ գործերի դրութեան վերաբերեալ համառոտապէս տեղեկութիւններ տալուց յետոյ տեւաջանում է հետեւեալ հետաքրքիր կտորները:

«Փոխարքայի օգնական Սուլթան-Կրիմ-Գիրէյը գրել է նահանգապետներին, որ ձեռք չառնեն վարչական խիստ միջոցներ եւ չըզգոնեն թուրքերին: Յայտնի աւակցութիւն Մէլէյի Բեազիմ օղլին, որ սարսափ էր ուրածում Գանձակի եւ Ղազախի գաւառներում իր աւազակութիւններով, նշանակուած է (ինչ—երեւի պրիստաւ) Գանձակի նահանգապետի կտրազարդութեամբ, համաձայն Սուլթան-Կրիմ-Գիրէյի նամակի:

Թուրք աւազակախմբերի թիւն աւելնալու կերպով մեծանում է այն ժամանակուանից իվեր, երբ Սուլթան-Կրիմ-Գիրէյը տեսակցութիւն ունեցաւ աւազակապետ Դալի-Ալիի հետ: Դալի-Ալիին, Սուլթան-Կրիմ-Գիրէյի կողմից ցոյց տուած ընդունելութիւնը եւ աւազակապետի իր նախկին գործերին վերագառնալը ըստ երեւոյթին շատ գրաւիչ երեւաց դրացու արիւնին ու գոյքին սիրահար ուրիշ անձերի եւս: Ընդհանրապէս տեղական իշխանութիւնների բռնած դիրքը թուրք տարրերի վերաբերեալ երկրի

համար կործանել հետեւանքներ է ունենում. Համարձակ կարելի է ասել, որ այս սխալմով հաղթել թէ կարգու կանոնը վերականգնուեն, Դրա մէջ մարդ համոզում է, երբ լսում է ամեն օր կրկնուող սարսփները, թէ եւ նահանգական վարչութիւնները, հակառակ աղաղակող իրականութեան, ճշմունք են իրերի գրութիւնը իբր հանգիստ ներկայացնել:

«Մին Օղէչ» թիւ 284

ՏԵՐՏԵՐԻՑ (Գանձակի նահ.) կալուածատէր Մելիք-Բէգլարեանը հեռագրում է.— Մի քանի հարիւր թուրքեր հաւաքուել են Ջիւանչիրի եւ Գանձակի նահանգի սահմաններում եւ մտադիր են յարձակուել հայ գիւղերի եւ իմ ագարակի վրայ: Հայերի վրայ կատարած բռնութիւնները յաճախակի են դառնում: Բնութրս միացել ենք անպաշտպան:

«Դ. Լ.»

Ջնայելով որ Բագուի քաղաքային վարչութիւնը դէմ էր հայերի առանձին սպանդանոց ունենալուն, սաւայն, ինկատի ունենալով որ հայերի թաղերում ծածուկ միս մորթելը շարունակուում է, այժմ համաձայնուեց իրոյ տալ առանձին սպանդանոց ունենալու:

«ՊԱԳՈՒ»

Ստացանք հետեւեալ հեռագիրը.

Շուշի, հոկտ. 1-ին 7. Ժ. 40 ր. առաւ.

Անցեալ օրը, Գէորգի տան մօտ լսուեցին մի քանի հրացանի ձայներ. պահակ զինուորները միահամուռ կրակ տուին փախող թուրքերի վրայ: Երեք օր առաջ նորից թուրքական մասում անհետացան շուշիքենցիքը. այսօր կամեցան նորից խաբւելով ներս տանել մի ուրիշ հայի որ յուզուած վազեց ոստիկանապետի մօտ. յաճախակի հայերի անհետանալը յուզման մէջ է գրել հայ հասարակութեանը: Մինչեւ այժմ չեն ազատուած այն 4 հայուհիները. սրոնց բռնել են վէլյաւուրի թափառիկ

թուրքերը: Անցեալ օրը Ամարասի տակ, կողակները բռնեցին 5 թուրքերի, որոնք ոչնչացնում էին այգիները: Հրացանաձգութիւն եղաւ. վիրաւորուած է մի թուրք եւ բռնուած: Լիւսագործան ճանապարհի վրայ հաշարում: Անցեալ օրը գիշերով, քաղաքի ծայրում գտնուող 3 պահակները հրացանները անհետացան: Ջիւանուորները հարբած էին. մէկը վիրաւորուել է գառնիվայրից ցած ընկնելով: Շնորհիւ հայ հասարակութեան օգնութեան հրացաններն ու յանցաւորները բռնուել են: Այսօր Սանքէնդում թիւրքի մացութեամբ բռնուած են խաղաղ կերպով գնացող 7 հայեր եւ բերուել են Շուշի: Դատախազը արձակել է նրանց, իսկ ոստիկանանապետը դեռ բռնուած պահում է.

ՅՈՎ. ԴՕԼՈՒՄԱՆՆԱՆ

—)o(—

Սեպտ. 28-ին, Թիֆլիզի երկաթուղու կայարանում, Բագուի գնացքը մեկնելու միջոցին, մի քանի թուրքերի իրեղենները խուզարկութեան ենթարկուեցին: Սուզարկման արդիւնքն այն եղաւ, որ թուրքերից մէկի բարձր մէջ, ինչպէս եւ խուրջի նում, գտնուեց սպայական ինքնատրճանակ եւ փամփուշտ, նոյնպէս եւ մի առանձին արկղ լիքը փամփուշտներով: Ասում են, որ այդ գէնքերը նշանակուած էին Շուշի տանալու: (Նոր դար)

—o—

Նոյնաման դէպք պատահել է նոյն կայարանում սեպտ. 30ի երեկոյան. Բագու գնացքը մեկնելու ժամանակ մի թուրք ճանապարհորդի շորերի մէջ գտել են մեծ քանակութեամբ վառոց...

—o—

Երեւան, 27 սեպտեմբերի. ԴՄՈՒԹՎԻՆԸ աւերուում է նրա ԵՐԵՒԱՆՈՒՄ բարօր վիճակը, աւերուում է աւելի ա.

րագ՝ քան այդ տեսնել կարելի է: Այգեկութի օրերն են. երեւանայի այգեաւերը 2—3 ամիս այգում պիտի անցնի իր օրը. որ այգին չփչանայ, չզոզանան, չճէն վախտն ինչ էր, որ աւեր օրին ինչ լինի: Առաջ էլ գողանում էին, բայց ծածուկ. այգիտէրը միեւնոյն ժամանակ իր այգու պահպանն էր, բաց ճակատով իր գողին հալածողը, երբեմն իսկ սպանողը եւ արգարացողը: Այգեկութի նախկին օրերում սպանութեան դէպքեր յաճախ կը լինէին—ոչինչ. բնական բան էր. —կը գողանային կը սպանուէին: Այգպէս էր մի տարի առաջ. այգպէս չէ սակայն այժմ: Այժմ հրապարակում կանգնած մահը սարսփով հալածել է շատերին դէպի տուն. այգին անտէր է. այգեկութի եկողներ շատ կան, նրանցից ոչ մէկը սակայն այգու տէրը չէ, կամ պատահական անցորդներ են, կամ հրացանը ուսին զինուորներ, որոնք քաղցած գայլերի պէս հիւանդանալու չափ ուտելուց յետոյ՝ վերարկուներով ու մէշոկներով քաշ են տալիս այգու բարիքը—ուր, իրանք գիտեն միայն: Այդ դեռ ոչինչ: Մէկ երկու այգիներում էլ աննման դեղձի ծառերի ահագին բազմութիւն, 150 200 ծառ, կտորած, ջարդած թափած են: Քարանում է մարդու մտածողութիւնը, հարց անգամ տալ կարող չէ: Եւ ինչ հարց տայ, երբ հաստատ գիտէ, որ այդ էլ իր հարեւանի պայգեկութն է: Մենք չենք կարողացել հանգիստ հո.

զով լսել մի այգետիրոջից այգպիսի վայրենի այգեկութի մի նկարագրութիւն: Ահա թէ ինչ են բերում մեզ հրացանաձգութեան օրերը իրանց հետեւող 2—3 օրեայ դադարներով:

Դադարների օրեր են: Անգործութիւնից մարդիկ բթմանում են: Սարսփը եւ երկիւղը կառավարում են մարդկանց: Թեմական դպրանոցի անապահով տեղի պատճառով մինչեւ 18 ի դէպքը շատ քիչ աշակերտներ էին դրպրոց գալիս. 450 աշակերտներից հազիւ 100—150 հօգի էր երեւում դպրոցում: Դպրոցի ճանապարհը անցնում է մի շարք ճայչիխանների* և պայտէխանների* միջով: Երկու կողմում նստած են նարգիլէ ծխող մեր հարեւանները և դիտում իրանց սալուից գնացող եկող մանուկ սերունդը: Գիտէ՞ք ինչքան լուլա բաներ են սովորում մեր մանուկները այդ ճանապարհի բնակիչներից... և այն էլ որքան շուտ, որքան խորն է թափանցում նրանց տպաւորուող ուղեղում... Դպրոցի իննամեայ դասընթացը անգործ է այդ նարգիլէ ծխող օրինակները—մօզէլների գէմ մաքառելու: Սակայն այդ էլ տանելի էր մինչեւ օրս. աղքատութիւնը ստիպում է շատ բան տանել: Իայց այժմ ուրիշ բան է: Հրապարակում կանգնած մահը այդ նարգիլէների բարեկամն է կարծես. նա քեզ է նայում երբեմն դաժան, երբեմն կեղծ պարկեշտ նայուածքով: Տեսնում ես ահա երիտասարդ թուրքի մէկը,

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԵՑԳ

Դ Է Ք Ի

Հայկական Ռոման մը (Թարգմանութիւն Անգլիերէնէ)

Գ. Ժ.

ՇՐՋԻՎ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Միքէի զիս այդ տիտղոսով անուանելէն աւելի վատահիւլ գրառական մը չկար էնոր սրտի հանդարտութիւնը հասկնալու համար: Անցեալ երկարատեւ մահացուցիչ տարուան ընթացքին հեղ մը իսկ չէի լսած այդ բերկրաբիթ անունը:

Թօժարակամ ոտքի ելայ. խաղողը արդէն ինքնին հրապուրիչ էր իր ճոխ գեղեցկութեամբ, բայց անոր Միւլէյմանի կողմէ զրկուած ըլլալուն իրողութիւնը մինչեւ անակնկալ աստիճան մը արժանիքը բարձրացուց:

Լոկ տեսքը ինձ զգալ տուաւ թէ այնորժակ ունէի. — հաճոյք մը, որ սուգի այս օրերուս մէջ կորսնցուցած էի:

—Ինչ ընտիր խաղող, գոչեցի հրճուանքով. չեմ յիշեր թէ նոյն իսկ անոր կէսին չափ գեղեցիկ կամ կէսին չափ համեղը ճաշակած եմ. եւ ատի

ի՞ր ընծան է, խորհեցայ,

—Այո, ատոնք Ակոսիի խաղողներուն նման են, Դէֆիս:

—Եւ ի՞նչ սիրուն ձմերուկ մը. Միքէս, բոլորովին անկարելի է ատի ամբողջովին ուտել:

Տարօրինակ ժպիտ մը խաղաց խոր շոժած դէմքին վրայ.— «Նախ պէտք է ուրիշ դաթայ մը եւ խաղողի ողկոյ մըն ալ ուտես, որ ձմերուկը կտրեմ»:

—Շատ լաւ, ախորժայիս վերադարձաւ:

Երբ Միքէն գոհացնելու աստիճան կերայ ու սուրճս խմցի, որովհետեւ բարեմիտ կիւր ջորեկուան ճաշերնիս պատրաստած էր, եւ ամեն ինչ սեղանին վրայէն վերցնելով խոշոր պընակի մը մէջ ձմերուկը տոջեւս դաբաւ: Այս ընելուն մէջ տարօրինակ միտք մը կար, որ անմիջապէս ներկատեցի իրբեւ անսովոր բան մը: Ապա դանակ մը տուաւ ձեռքս, որ նոյնպէս անսովոր էր, քանի որ ամեն ճաշին Միքէն կը կտրէր ու կըս պատաւորէր իր Դէֆիին:

—Դուն կտրէ, Միքէ, ըսի:

—Ո՛չ, ոչ, իշխանուհիս պիտի կտրէ միայն. իրեն համար է: Ուստի դանակը առի եւ շերտ մը կտրել սկսայ, բայց, կամ դանակը շատ բոթ ըլլալու էր եւ կամ... կամ ձմերուկը խիստ կարծր: Ո՛ր ըլլալը չեմ կրնար ըսել, օրովհետեւ միմիայն

վրայի կեղեւը կրնայի կտրել: «Տարօրինակ բան, Միքէ, բախ, այդ արտաքոյ կարգի ձմերուկ մը ըլլալու է, կեղեւը կտրուելէն վերջ միտք դիւրին ըլլալու էր, բայց... հէ՛... այս ինչ է, գոչեցի, երբ դանակը դուրս քաշեցի, որպէս զի աւելի ուժով մէջ խոթեմ, —գանակին ծայրը հոս ու հոն կցուած էին թղթի կտորներ... «Ո՛հ, միքէ, ի՛... չ... է... ա... յ... ս...»:

Ճշմարտութիւնը երեւան գալ սկըսաւ ու եւ չափէն աւելի կը գողգողայի: Վերջապէս ձմերուկ չէր այդ Դանակը կրկին մէջը խոթեցի, բայց այս անգամ զգուշութեամբ, «Լոկ թղթի կապոց մըն է, տե՛ս... տե՛ս... Միքէ, ու չորս կողմէն ստկելով՝ դուրս ելաւ. թղթի թանձր կապոց մը որ խելացիորէն պարպուած ձմերուկին մէջ գետեղուած էր. իր պատաւած վշտահար դէմքին վրայ քմծածացի մը նշոյլը երեցաւ: Այն բոլոր տարիները, որ մօրմէ մը աւելի եղած էր ինձ համար. այդ ժպիտը չէի տեսած տակաւին: Բայց թէ իմ դէմքս ինչ կը ներկայացնէր, չեմ կրնար ըսել Միտքս չուարումի ու բերիութեան անպատում վրդովանքի մը մէջ կը գտնուէր:

Կապոցը ձեռքս առի եւ տեսայ որ երկու կողմը խիտ կերպով գրուած էր Սակայն բառ մը միայն.—խոշոր գրուած—գրաւեց ու շարքութիւնս —«Միւլէյման...» Շրթունքներուս

սեղմեցի ու... արասուեցի...

Գ. ԺԱ.

ԱՐԻԱՅԻՐ

Ձմերուկէ նամակիս հետ մէկ տեղ —կը ծիծաղեմ այս տողերը գրած պահուս—նոր տարի մը մտաւ կեանքիս մէջ, Տառապանքներս.—եթէ կարելի է ցուրտ պարպութիւնը տառապանք անուանել— որ ինձ համար կորուսած երջանկութիւններ էին, հիմա անոր սիրոյն համար կաթոգին ու անհատնում անձկութեամբ մը վերադարձան. բայց ատի բարբար յետաշրջում մըն էր: Խորհելով իմ մասին, լոկ ուժերս կորսնցուցի. մտածելով անոր մասին, հետաքրքրուելով իր գործերով, իր վշտանքներով, տառապանքով իր վշտանքով ու իր փախուստներով աշխոյժս իր անսահման յորդումով վերադարձուաւ ինձ: Ո՛հ, այդ օրհնեայ նամակը... ցորեկը ընկերս էր այն—ծոցս կը պահէի, գիշերը երազս— բարձիս տակ ծածկուած: Միւլէյման, իր սիրոյն ջերմ զգացումները թափելէ յետոյ, իր ցաւը կը յայտնէր գալ ու իր նշանածը—ինչ անուշ բառ—տեսնելու անկարող ըլլալուն համար: Այո՛, ես իրենն էի ու Միւլէյման իմ էր: Կը սիրէի մտածել այդ մասին—կեանքի մէջ, մահուան մէջ—յաւիտենականութեան մէջ—մահը այսպիսի մի-

նստած թախտի վրայ, բերդանի փամփուռաներով «բարբառիկ» է խաղում, նայում է քեզ և խաղը շարունակում։ Ստիպում ես խուսափել, տեսնելու չտալ։ Այս պէս էր անա դպրոցի ճանապարհը, որի տեղափոխութեան հարցը ասես ինքնին վճռուեց 18 ի դէպքով։ Ծնողների ընդհանուր ժողովը գլուխ չեկաւ, որովհետեւ մեծ մասը աղքատ մարդիկ են կամ այգիներով զբաղուած, մի մասն էլ կեանքի անպահովութեան պատճառով հաւաքուելուց խուսափում է։ Դրպարոցի կեանքը կանգ է առել 18 ի դէպքից յետոյ անա երկրորդ շաբաթն է, որ դասեր չկան, դպրոց գնացող աշակերտ և ուսուցիչ չկայ։ Հոգաբարձութիւնը դժուարանում էր տեղափոխել դպրոցը՝ առարկելով նիւթահանի սղութիւնը։ քաղաքացիներից նոր հանգանակութիւն անել դժուար է, առանց այն էլ քիչ չեն տուել։ Այդ պատճառով ամսոյս 20 ին գումարուած հոգաբարձական ուսուցչական խառն ժողովում բարձր վարդապետ Կարապետի նախագահութեամբը միաձայն վճռուեց դպրոցի տեղը փոխել, նոր տուն վարձել, իսկ այդ ծախքը տնտեսել գոնէ այս տարի տեսչի ուժերից (1500 ու.) Ուսուցչական խումբը իր ամբողջութեամբ յանձն առաւ ձրի կատարել այդ պաշտօնը և յանձին իր միջից ընտրուած տեսչի ու նրա օգնականի, հրաշխաւորեց դպրոցի կառավարութիւնը, միայն թէ ապահովուի աշակերտ-

ների և ուսուցիչների կեանքը, միջոց սրուի հանգիստ հոգով պարապելու։ Այնուհետեւ ուսուցչական խումբը իր միջից ընտրեց իր բնուէ տեսուչ՝ մանկավարժական ժողովի նախագահ՝ պ. Ա. Չիլինկարեանին, նրան օգնական՝ պ. Ս. Շնկովիկեանին։ Հոգաբարձութիւնը յանձն առաւ դրպարոցի համար նոր շէնք փնտռել, սակայն մինչեւ օրս այդպիսի շէնք վարձուած չէ, ուստի երբ կը սկսուեն դասերը—գժուար է ասել։

Քաղաքը մինչեւ օրս խաղաղ է և հանգիստ։ Գիշերները լուում են երբեմն հատ հատ հրացանաձգութիւն, բայց անհետեւանք փոխոցներով շրջող զինուորներն ու օֆիցերները խուզարկում են ցանկացած անցորդին կամ կառքով անցնողին։ Ձէնքերը խլում են անխոր, այդ պատճառով էլ փողոցները քիչ ապահով են, բայց էլի երկկոյնեան ժամի Զից բոլոր փողոցները դատարկ են, Ձինուորական երաժշտութիւնը ամեն երեկոյ մինչեւ ժամի ութ և կէսը նուազում է գրօսարանում ու միշտ զբօսնողների մեծ բազմութիւն կայ։

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ՆԱՄԱԿ ՍԻԼԻՍՏՐԷՆ

Նորընտիր Հոգաբարձութեան վաւերացումին կ'սպասելի ցարգ գրելու և յայտնելու համար թէ այս տարի մեր գլխուն ի՞նչ եկաւ։

Երկու թիփիկ ուսուցիչներ—

թիփիկ՝ իրենց ստելու յայտնի անպարկեշտութեամբը—քիչ մնացեր տնւոյս վարժարանները փակ պահէին, եթէ Հոգաբարձութեան արժուն ջանքերը չըլլային։

Ստեփ. Ապաղայեան և Աւետիս Գույումճեան՝ որչափ ալ զիրար գերազանցէին իրենց մտաւորական վիթխարի դատարկութեանը մէջ, աշխատելու էին սակայն չը ստելու, չը խաբելու իրենց մարդկային տարրական պարտականութիւնը ի գործ դնելով, հակակշիռ մը կազմելու գոնէ իրենց ունայնութեանը դէմ։

Առաջինը թ Օ Ս Ք կուտայ հոս մնալու ու կերթայ կը վարձուի Ռուսչուք որովհետեւ և Յ. Հոգաբարձութեան հրաժարած է, եթէ ոչ զօռ կը տեսնար Ռուս. ճուքը. և երկրորդը հեռագրավարձութեան մէջ կըլլայ ու իր առաջարկած գիշը ընդունելու պահուն կերթայ Պուրկազ անշուշտ գաղտնի նպատակով մը (Միքէ Գալիաքճեանի) Մ. Գ. ի ստորագրութիւնը կեղծելով հեռագիր կուտայ Սիլիստրէ թէ «Գույումճեան Բրովատի է գործով վերադարձին կուգայ»։ անով մեր տիար Գույումճեան կը թաղէ իր խօսքն ալ իր պատիւն ալ, անա՛ վարժապետներ՝ որոնք ամսոս որ կոչում ունին դաստիարակելու մեր աղաքը և սովորեցնելու անոնց պատուոյ խօսքին տրժէքը։

Սիլիստրէցի
17 Սեպտ. 1905

**ԳԻՏԱԿՈՒԹԵԱՆ
Ա Ր Չ Ա Գ Ա Ն Գ**

Պատժօն, Հոկտ. 7 1905 (Ամերիկա)

Յարգելի գաղափարակիցս պըն. Վարդօ,

Նկատելով, որ իմ նախորդ գրութիւնս իր բարերար ազդեցութիւնը ունեցաւ այստեղի կարգ մը ընկերներուն վրայ, այս անգամ կուգամ քիչ մը աւելի մանրամասնութեանց մէջ մտնելու նպատակ ունենալով միայն և միայն իմ Դաշնակցական ընկերներս գիտակից պահել կարգ մը իրողութեանց։

Իմ օգոստ. 9 թուակիր նամակիս լոյս տեսնելէն յետոյ՝ պըն. Վաւ. Եանի զաբէնները աւելի տի են Ա. Ն. դանելու քան թէ այս շարեաց պատճառները, առանց բոպէ մը իսկ խորհելու որ Վաւ. Եանի ինքը գիտէ թէ որո՞ւ հետ խօսած և ով ի՞նչ ըսած է իրեն, Այդ սուրբ մարդը, որ ժամանակէ մը ի վեր կարգ մը անգիտակից բայց անկեղծ ընկերներու կը կլնցներ թէ ինքը միայն «Յ» սուրբ շաբաթականով է որ կապրի և տարեգլխուն իր այդ չնչին շաբաթականէն աւելցուցած «50» սուրբը Դաշնակցութեան կը նուիրէ, այսօր . . .

. . . օգոստ. վարիտէն չը զրկելու համար տեղն ի տեղը ամբողջութեամբ է, մէկ խօսքով ոչ մի բառ արտասանել կուզէ, և ճիշտ ասոր համար ալ է, որ գիտակից ընկերներու մեծ մաս մը այսօր ձեռք ձեռքի տուած կը ջանան այս շաբաթներու առջեւ աննելու Գիտակից ընկերներ ըսի և պէտք է որ պարզմ, թէ ովքե՞ր և ի՞նչ կարգի ընկերներ են ասոնք «Շարժումի ընթացքները չի ձանձրացնելու համար պէտք է խոստովանի որ այս ընկերները եղած են Դաշնակցութեան է՛ն զտեղ է՛ն գործունեայ անդամները, որոնք

ացում մը չէր կրնար բաժնել. Դէֆին իրն էր ու Սիւլէյման՝ իմօ։

Սիրտս սիրոյ այս շիրմութեամբ լեցուած, լոկ սիրելիիս գործքերով զբաղուած էր, Մէկ վտանգէն դէպի միւս վտանգը դիմող իր արագ արշաւանքները՝ փոքրիկ հերոսական իմ բակով—որովհետեւ արեւնհզութեան եւ կոտորածի դրօշը այժմ կրկին ծածանիլ սկսած էր դժբախտ Հայաստանի վրայ—մեծ չիացուածով պաշարած ին զիս, Մոլեգին ու վրէժխնդիր թշնամիին ձեռքէն իրենց մագապուր փախուստները կահարեկէն զիս, իրենց սրբազան գործերը, կեանքերին ձեռքերնուն մէջ առնելու վրալայթներու նախազգուշութիւնները տալի երբ կարմիր աւերումը յառաջ կը մղուէր՝ եւ այդպիսով հարիւրաւորներու օգնելը՝ լեռները ապաստանելու համար՝ հոգիս երախտագիտութեամբ եւ գոհաբանօրէն Արարչին գահին կը բարձրացնէին։

Ոչ, Աստուած մեզ մոռցած չէր սակայն, քանի ասոնց նման հայրենասէրներու խմբակներ ոտնակոխ դարձած Հայաստանի մէջ կը չը ջէին։

Ցաւին գիշերը երկարատեւ եղած էր. ուրխութիւնը Արշալոյսին հետ կը ծագի։

Սիւլէյման իր նամակը կը վերջացնէր սա կերպով.— «Անգիտութիւն պիտի ըլլար ծափել քեզմէ, ո՛վ Դէ

Ֆիս, որ Սիւլէյմանի կեանքը ժամ ուան մը արժէքն ալ չունի, քանի որ հայերուն առաջնորդը ճանչցուած մէկ մըն է։ Մարգասպանին դաշոյնը դարձանակալին յանկարծական յայտնումը, կամ խաժամուծներու հզօր յորդումը, կրնան վերջացնել այն կեանքը, որ ան յօժարութեամբ պիտի պահպանէր իր սիրելիին համար, այդ մահը որքան ալ դառն ըլլայ, լոկ ժամանակաւոր բաժանում մըն է, վտանգն ու մահը իրենց շրթալով օրէ օր մեղ կը շրջափակեն. եթէ չը կրնանք մեր փոխադարձ սէրը կենդանի վայելել այս աշխարհում, գէթ մէկտեղ մեննելու երջանկութիւնը կրնանք ունենալ Միաս բարո՛վ, Դէֆիս. և թէ չը հանդիպինք կրկին, վստահ եղի որ Սիւլէյմանը իր կեանքը Հայաստանի համար պիտի զոհէ, ու վերջի հառաջը Դէֆի՛, պիտի ըլլայ. . .»

Ու կրկին. . . «Եթէ վտանգ Դէֆիիս տանը մօտենայ, ըսէ Արամբանին, որ տանիքին վրայէն պիտի տկունէ՛ հրեղէն խաչի մը փչուածքներու վերածուիլը օգին մէջ, Այն ատեն, վրիթի մը արագութեամբ, Դէֆիս պէտք է գաղտնի գաղտնի դուռը վազէ ու դուռը բաց թողնէ, որ իր փրկիչները ներս մտնեն»։

Եւ դարձեալ, կարծես չէր կրնար դադրիլ ինձ խօսելէ.— Բայց, արիւացի՛ր, ով իմ սիրասուն երգչուհիս,

թագուհիս, Սիւլէյման ու Դէֆին պէտք է ապրին տակաւին՝ իրենց Հայաստանը ազատ տեսնելու համար. . .»

ԳԼ ԺԲ.

«ԿԱՐՄԻՐ ԱՆԵՐԻՉԸ» ԿԸ ՄՕՏԵՆԱՅ

Այդ սրտապնդիչ խօսքերը հոգւոյս մէջ արձանագրելով՝ օր բոտ օրէ յաջողեցայ նոյնիսկ սովորական մտածումներս ալ հալածել. ամեն կերպով պատրաստուիլ սկսայ այն դրժնգակ օրուան, որ շերտէն խաչը՝ ողէն պիտի գուժէր, ու այն լաւագոյն օրուան, որ Սիւլէյման կը գուշակէր։

Աւելի եւ աւելի մտերմացայ հօրս հետ, յայտնեցի քնոր Սիւլէյմանիս նամակի մասին ու տեսայ որ քիչ մը տհաճութիւն զգաց՝ իրմէ զատ ուրիշ ձեռքերէ հասած ըլլալուն համար, բայց քանի որ ուրիշ կերպ կարելի չէր, հետեւաբար ինքն էլ համակերպեցաւ այդ խելացի միջոցին, Ամեն գիշեր հօրս հետ տանիքին վրայ կը յըջէինք, եւ գիշեր չէր անցնէր որ հեռուն՝ այս կամ այն քաղաքին հանաւոր հրկիզութեան արտացոլացումները հօրիգոնը չը բոցավառէին Այո, «կարմիր աւերիչը» կը մօտենար, վտանգի եւ մահու շրթան կը շրջափակէին մեր վրայէթը—մեր քաղաք, մեր տունը, Հայրս այլեւս իր զարհուրելի վախերը չէր ծածկեր

ինձմէ. Երբեմն, օրերով հեռու տեղեր կը զրկէր Գրօգին, կատարուող դժոխային արարքներու մասին տեղեկութիւններ ստանալու համար։

Գրօգօ. . . բայց վտանգիլ էր ան։ Սիւլէյմանի նամակին հետ միասին աշխոյս վերադառնալէն վերջ՝ անոր նկատմամբ ունեցած անտարբերութիւնս նախկին ատկուութեան փոխուեցաւ։ Ատկուութիւնը—ատկութեանէ աւելի բան մըն էր այդ, կը վտանայի ու կը ստկայի անկէ՛ ինչպէս վայրագ գազանէ մը, Այն կատարի ճիշդ, որ այդ անմոռաց գիշերուան հանդարտութիւնը խանդարեց երբ, հայրս ձեռքս բռնած՝ Սիւլէյմանին ձեռաց մէջ դնելով կօրհնէր մեզ՝ կրկին ու կրկին կարձաքանդէր ակունջիս մէջ. կը ջանայի միշտ իր տեսութեանէն հեռու մնալ եւ կամ լոկ հօրս ներկայութեամբ միայն տեսնել զայն, սակայն մի եւ նոյն տան մէջ ազրելիս անկարելի կը դարձնէր այս, Ասեն մէկ շարժումներու կը հետեւէր ան։

(Շարունակելի)

միշտ պատրաստ են եղեր իրենց ար- իւն քրտինքով ձեռք բերած տօյար- ները նուիրելու Հայրենիքի Ազատա- գրութեանը ։ Փորձին և որը դժ քաղաքարար այսօր կերելի թէ ինչ նպատակի է ծառայելու ։ Ես, ինձ թոյլ չեմ տար առ այժմ այդ մանրամաս- նութեանց մէջ մտնելու քանի որ մը- տադիր չեմ այդ հաշիւներու տոպ- րակը բանալու, այդ կը թողնեմ ապա- զային և այն ալ աւելի մօտէն գոր- ծէն տեղեկութիւն ունեցողներու ։ Այս գրութեամբ ես կը փափաքեմ գրեմալ թէ 1. - արդեօք պո՞րն Վար- դօր ըսածները իրողութիւններ են եթէ այո՞, ինչու իրողութիւնը ըն- կերներէ կը պահուին, քանի որ ինչորէր հին չէ և ժամանակին կա- ռող կը լինէինք կարգադրելու ես, եթէ ո՛չ, տեղն է հարցնել թէ ինչու Դաշ- նակցութեան պաշտօնական մարմին- ները ականջին գոյած են այդ բա- ները չի լսելու համար, չէ՞ք կարծեր, որ ստուիւն մը և կա՞մ զրպարտու- թիւն մը ներքեւ պէտք է և այն ալ փաստերու և իրողութիւններու վը- րայ հիմնուած ։ 2. - Դաշնակցութեան ո՞ր մէկ օրէնքով Արեւելեան կամ Ա- րեւմտեան Իւրօն և կամ ու է Դաշ- նակցական մարմին Վարդօրն ու պան- նելու որոշում կուզէ տալ, ո՞վ է Վար- դօն, զեղծարար մը, հապա ինչու է իր զեղծումները երեւան չէ՞ք զննել, դա- ւաճան մը, ուրեմն ինչու չէ՞ք հրա- պարակաւ խայտառակեր զինքը, և մի՞թէ կը գտնուի աշխարհիս մէջ մէկ Դաշնակցական անհատ, որ եթէ հա- մոզուի թէ Վարդօն այս ըսածներուս առաջինն է և կամ երկրորդը իր Ա- ջաքին չի պիտի դարձնէ անոր ։

Ես և ինձ նման շատ մը դաշնակ- ցականներ որոնք շատ մօտէն ծանօթ ենք անց ու զարձին կասարելապէս համոզուած ենք, որ Վարդօրն այս- պիտի կէտերու մէջ մեղադրելու ան- խղճութիւն և այն ալ կասարեալ անխղճութիւն է ։ Վերջին «Դրօշակ» խեղճ ու կրակ պաշտօնական Ազգը արգէն խոստովանութիւն մըն էր թէ իրենք ու է կերպով չեն կարող հեր- քել այն անուրանալի իրողութիւն- ները որոնք երեւան եկան Շարժու- մի միջոցաւ, ու իրենք բան մը կը- նեն վերջապէս բան մը ըրած ըլլալու համար ։ Բայց թող լաւ հասկանան այդ պարտնները որ այլ եւս երկար ժամա- նակ չեն կարող մեկ խաղցելու, ժա- մանակը հասած է և մենք պէտք է որ սեր ճակատագիրը մեր ձեռքն առ նենք, ու փոխանակ մեր արիւն քըր- տինքի արդիւնքով Ամերիկայի և արտասահմանի մէջ կարգ մը նե- րու փորը ուճացնելու, աշխատինք մաքրել մեր շարքերը այդպիսիներէ և այն ատեն է որ ճշմարիտ յեղափո- խականներ կարող ենք կոչել զմեզ, իսկ այս ընթացքով ու է օգուտ հասցնել չի կարողանալն զատ, կը պղծենք յեղափոխութեան Ա. անունը և ապագայ սերնդի նզովքին և մի- այն նզովքին արժանի պիտի ըլլանք ։ Ուրիշ եւմ ըսելու որ գէթ Ամերի- կայի ընկերները սկսած են հիմնա- կան միջոցներ ձեռք առնելու որ- վէտի կարողանան այս քառասկան զրուսեան վերջ մը տալ Շատ չի տե- ւեր և հրապարակ պիտի լեցուի կարգ մը յայտարարութիւններով որոնք արդիւնք են Վառմանի բռնած ըն- թացքին և ընկերներու գիտակցու- թեան, Լուսէլին, Ջրլսին, Ալիմէն, Լինլն, Պոսթօնէն եւլն. ընկերներ են որ արհամարելով, 4. կոմիտէի եւ վառմանի յիտորտալի սպառնալիք-

ները մէկ տեղ կը ժողուին ձեռք ձեռքի տալու եւ հրապարակէն հե- տացնելու հացկատակներու խուճար, եւ այս անգամ արդիւնքը միայն Ա- րեւմտեան Իւրօնի չի պիտի զրկուի, որ վրան կապար գրիչով մերժուած գրէ ու ետ զրկէ, այս մասին արդէն ամեն բան կարգադրուած է ։

Ա. Ն.

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

(- 0 -)

«Սին Օղէչէսդա»-յուժ մի բժշկի մասնաւոր նամակից առաջ է բերած շատ հետաքրքիր յօդուած, որ կնկա- րագրում է թիւրքերայում տիրող ան- նախանձեղի պայմաններն ու թիւրք կառավարութեան գազանութիւնները հայերի վերաբերմամբ ։ Թարգմանում ենք յիշեալ յօդուածը ամբողջովին ։ «Ազդի երկու ամիս է, ինչ ես թո- ղել եմ Ռուսաստանը, էրզրումում այնքան շատ էի զբաղուած, որ հա- զիւ կարողանում էի ճաշել Առաւօտ- եան 7 ժամից մինչեւ երեկոյեան 11 ժամը, ստիպուած էիք լինում ըն- ղուենի 300 հիւանդից աւելի, Հար- կաւոր էր տեսնել թէ ինչպիսի հա- ւատով էին դիմում հիւանդները (թիւրք թէ հայ) մեղ, Բացի այդ հայերը մի տեսակ հոգեկան երջան- կութիւն էին զգում, որ այսքան տարիներ ի հալածանքներից յետոյ նրանք անապասելի տեսնում են ի- րանց ազգակիցներին, այն էլ օգնու- թիւն հասցնողներին ։

Եթէ դուք տեսնէիք, թէ ո՞րքան թշուառ է այս ժողովուրդը եւ ո՞ր պիտի համբերատարութեամբ նա կրում է իր խաչը, եթէ դուք տեսնէիք նը- րանց աղքատութիւնը, նրանց կիտ- սով գոյութիւնը, նրանց սարսափելի հիւանդութիւնները, զուք ապշած կը լինէիք նրանց երկար համբերու- թեան վրայ, նրանք թալանուած են, հրկիզում, սնտեսապէս քայքայում, իսկ նրանք այնուամենայնիւ յոյսերը չեն կորցնում եւ, սպասելով աւելի լաւագոյն օրերի, հանապազ աղօթում են Աստուծու, Ս, եւ նրանց սեղը վաղուց արգէն երես դարձրած կը լինէի նրանից ։ Այսքան դարձր եւ այդպիսի ոչ-մարդկային տանջանք- ների էլ ինչու համար են այսքան տառապանքները, ինչու համար են այդ եղիպտական զլխատումները, Սա- կայն այն բոլորը, ինչ որ ես տեսայ էրզրումում նսեմանում է Բիթլիսում եւ մանաւանդ Մուշում իմ տեսած սարսափներէ առաջ ։

Իմ այնտեղ եղած ժամանակն ար- գէն թալանեցին երկու գիւղ, խորս —այստեղ 80 տուն է, մօտ 1000 բնա- կիչներով ։ Թիւրքերը—200 զինուոր եւ նոյնչափ էլ քիւրդ հրոսակներ յարձակուցին գիւղի վրայ միայն այն պատճառով, որ զիւրերը այդտեղ մտել էին 21 Ֆէդայի, Յերեկուայ ժամը 3-ից մինչեւ երեկոյեան ժամը 9-ը շարունակուած էր հրացանաձու- թիւնը, որին գիւղացիք, իրրեւ ան- զէն, իհարկէ չէին մասնակցում, Գի- շերուայ միութեան մէջ Ֆիդայիները կարողացան հեռանալ, Ձինուորներն ու քիւրդերը սրանից յետոյ ներս խուճեցին գիւղը, Գազանացած վի- ուորներն ու քիւրդերը սկսեցին սպա- նել մարդկանց, ովքեր երիտասարդ էին կարողացան փախչելով, ապա- ուել, իսկ գազանները սպանեցին 15

ծեր 50-80 տարեկան հասակի, 7 ե- րեխայ, որոնցից երկուսին ողջ-ողջ այրեցին թոնդրները վրայ, Դիւղը թալանուած է մինչեւ վերջին թելը ։ Ամբողջ տաւարը, հացահատիկները ամբողջ պաշարը, բոլոր իրերը յա- փառակուած են, Ձինուորները բռնե- ցին մօտ 80 կին եւ 20 աղջիկ եւ բաժանուելով 3-ից մինչեւ 15 հո- զուց բաղկացած խմբերի, 3 օր ու գիշեր շարունակ բռնաբարում էին այդ խեղճերին, Բռնաբարում էին նոյն իսկ 8 տարեկան աղջիկներին ։ Սրանից մի քանիսը արգէն մեռան, մի քանիսը հիւանդ են մինչեւ, օրս, Ընդամենը սպանուած եւ վախճան- ուած են 22 հայ, Այս դէպքը կատար- ուեց Չատիի շարթուայ մէջ, հինգ շաբթի օրը ։ Երկրորդ դէպքը տեղի ունեցաւ այստեղից—Մուշից 3 ժամ հեռաւորութեան վրայ, Գիւղումը սպանուել էր մի քիւրդ ։ Այդ պատ- ճառով գիւղը պաշարեցին զինուոր- ներն ու քիւրդերը, Գիւղացիները կարողացան փախչել եւ ապաւինել սարերում, Փախուած միջոցին սպա- նուել են 2 կին եւ մի պատանի Գիւ- ղի բոլոր տները նախապէս թալանե- լուց յետոյ հրդեհի մատնուեցին, Բո- լոր տաւարը քեցին Մուշ, եւ այստեղ զինուորները անասուններին մորթում են եւ ուտում կամ վաճառում, Այս տեղ էլ մօտ 800 մարդ մնացին առանց մի կտոր հացի ։ Բառ չկայ նկարագ- րելու բոլոր տեսած սարսափները, Ես գրելիք յուսահատուած եմ, Ես Մուշումն եմ արգէն 10 օր, եւ թիւր- քերը չեն թոյլ տալիս բան անելու, թէեւ ժողովուրդն անհամբար մեզա- նից գործ եւ օգնութիւն է սպասում, Եթէ այսպէս էլի շարունակուի— ստիպուած պիտի լինեմ հեռանալու ։ Սուլթանի կառավարութեան գոր- ծերը վաղուց արգէն ամբողջ քաղա- քակիրթ աշխարհի կողմից գամուած են նշաւակութեան եւ խայտառա- կութեան սիւնին ։

ԱՐՇԱԼՈՅՍ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Եւրոպական թերթերը կը հա- զորդեն թէ եւրոպական ժամտաշ աների շէֆ Ջիօրջիտիս փաշայի և Հիլմի փաշայի յարաբերու- թիւնները լարուած են ։

—Կը հազորդեն նոյնպէս որ Հիլմի փաշա պիտի հրաժարի իր պաշտօնէ ։

—Վիեննայի գիււնապիտական շրջանակներու մէջ կը խօսուի որ եթէ թիւրքիս յամառի Մա- կեդոնիոյ ելեւմտից քօնթրօլը մեքժեթուէ մէջ, եւրոպական մեծ պետութիւնները միացած նաւա- յին մեծ ցոյց մը պիտի ընեն ։

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Երկաթուղային շատ մը գծե- րու գործաւո, ներք գործադուլը բաժ են, ել թեւեկութիւնը դադ- րած է ։ Ինթրսպուսկի մէջ և այլ տեղեր յեղափոխականները միթիւններ սարգած են և շատ ազատ ճառեր արտասանած, Ին- թրսպուսկի մէջ ոստիկանու ։

Թիւրք գրեթէ միջամտած չէ ։ Յեզափոխական շարժումը հիմակ աւելի զօրաւոր է քան առաջ էր ։ Կը կարծուի թէ այդ շարժումնե- րուն նպատակն է Տուժայի ընտ- րութեանց արգելք հանդիսանալ ։ —Կառավարութիւնը որոշած է ծայրագոյն ուրեւեքի մէջ գրտ- նուած զինուորներէն հոն գաղութ ներ կաշմակերպել ։

ՅԻՆՍՍԱ

Նախագահ Լուպէ մեկնեց է Սպանիա ։ Հասարակարարական ու պանացիները կը պատրաստուին համակրական մեծ ցոյցեր ընել Լուպէի ։

—Իւրօք հառավարութիւնը Ֆրանսայի Դեմոկրատիկ յանձնած է Ոսկեղջուրին երկաթուղային կամուրջը շինել ։ Իլլա Փերմա նիոյ հանդէպ Ֆրանսայի համար յաղթանակ մը կը համարուի ։

Բացած է ՉՈՐՍ ԱՄՍԻԱՅ Բա մանորագրութիւն

Հ Ա Ս Կ Ե Ր

Մանկական պատկերազարդ ամսա- գրի, 17 թ. սեպտեմբերից մինչեւ տարուայ վերջը Ամսագիրը լոյս է տեսնելու թիֆ- լիսում 32-48 երեսանոց մեծադիր գրքոյներով եւ հրատարակելու է հետեւեալ ծրագրով ։

- 1 Բանահիւսութիւն թէ արձակ և թէ ոտանաւոր [վէպ, պատմածք, պատկեր բեմական գրուածք, պօէմ, բանաստեղծութիւն, առակ և այլ գե. զարեստակաւ երկեր] ։ —2. Կենսագ- րութիւն. —3. Ծանապօրնորդու- թիւն. —4. Գիտական հանրամատչելի յօդածներ աշխարհագրութիւնից, պատմութիւնից, բնագիտութիւնից և գիտութեան այլ ճիւղերից. —5 Յօդ- ւածներ գեղարեստի մասին. —6 Մանր լուրեր և Այլևայլ. —7. Ֆիզիքա- կան փորձեր, խաղեր, շարադներ, ու- բուններ և զանազան զարճալիքներ. —8. Թղթակցութիւն մանուկ ըն- թերցողներէ հետ ։

ԱՄՍԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է

ա) ներչնչի մանուկ ընթերցողնե- րին վսեմ ձգտումներ, արժարձելով նրանց մէջ սէր դէպի մարդը և դէպի հայրենի միջավայրը, բ) տալ նրանց ճիշտ հասկացողութիւններ բնութեան և մարդու մասին, գ) զարգացնել նը- րանց ճաշակը և զ) ուրախութիւն և աշխոյժ մտնել մանկական կեանքի մէջ ։

Խմբագիր հրատարակիչ ԿԱՏ. ԼԻՍԻՃԵԱՆ, Չորս ամսայ բաժանորդագրին է. ՀԱՍԿԵՐ՝ մանկական բաժինն 4 ո. մանկավարժական բաժնով, 1. ո. 40 կ. Թիֆլիսում և Թիֆլիսից գուրս ՉՈՐՍ Ֆր. Արտասահմանում ԵՐԵՎ Ֆր. Բաժանորդ կարելի է գրվել— Թիֆլիս, Բէտաքսիեա ժուրնալ ԱԼԱՔԷՐՈ կամ Թիֆլիս, Բէտաքսիօն տուժու, րնալ շէտակեր ։